ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Իջևան «15» «12» 2021թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Անուշավան Հայկարամի Մակարյանի /այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ/, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԴԻՋԻԹԱԼ ՎԵՅՎ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Արտաշես Բարսեղի Թովմասյանի /այսուհետ՝ ՍՊԸ/, որը գործում է կազմակերպության կանոնադրության և լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն Հուշագիրը /այսուհետ՝ Հուշագիր/՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների, սույն Հուշագրի շրջանակում գործողությունների սահմանումն է:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Երկու կողմերը համատեղ ուժերով նպաստում են ուսանողների և համայնքի շահակիցների ներուժի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

2.2. Կողմերը, համապատասխանաբար կնքելով սույն համագործակցության հուշագիրը, ամրագրում են սահմանված նպատակին հասնելուն ուղղված իրենց պատրաստակամությունը:

2.2. ԵՊՀ ԻՄ-ն պատրաստակամ է՝

2.2.1. Սույն հուշագրի 1-ին կետում նշված գործողությունների իրականացման նպատակով տրամադրել անհրաժեշտ տեխնիկական միջոցները, լսարաններ և լաբորատորիաներ:

2.2.2. իրականացնել կամավոր աշխատանքներ:

2.3. ՍՊԸ-ն պատրաստակամ է՝

2.3.1. ԵՊՀ ԻՄ ուսանողների և շահակիցների համար կազմակերպել և իրականացնել դասընթացներ SS և այլ մասնագիտական ոլորտների շրջանակում,

2.3.2. ներգրավել ոլորտի մասնագետների համապատասխան դասընթացներ կազմակերպելու նպատակով:

2.4. Կողմերը պատրաստակամ են՝

- մասնակցել հուշագրի իրականացման աշխատանքներին, հուշագրին առնչվող հանդիպումներին,
- հուշագրի կատարման վերաբերյալ տեղեկություն ստանալ,
- համագործակցություն իրականացնել պատշաճ մակարդակով ,

- կազմակերպել հանդիպում-քննարկումներ Կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ,
- համատեղ կազմակերպել և անցկացնել գործնական ժողովներ,
- ապահովել ուսանողների, դասախոսների և շահակիցների շարժունությունը սույն հուշագրի շրջանակներում ծավալվող միջոցառումներին (այդ թվում նաև վիրտուալ-առցանց), իրականացնել համատեղ հետազոտական նախագծեր,
- քննարկել (անհրաժեշտության դեպքում) Կողմերի նյութական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները,
- ապահովել համատեղ աշխատանքի ընթացքում փոխըմբռնման մթնոլորտ, ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն բոլոր համաձայնեցված հարցերի իրականացման առնչությամբ,
- ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,
- անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,
- նախօրոք տեղեկացնել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների մասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- պարտաճանաչություն,
- որակի վերահսկում
- փոխըմբռնում և փոխզիջում,
- թափանցիկություն,
- համագործակցություն:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1. Հուշագրի Կողմերի համատեղ գործունեության ղեկավարումն իրականացնում են Կողմեր հանդիսացող կազմակերպությունների ղեկավարները կամ նրանց կողմից նշանակված լիազոր ներկայացուցիչները:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կողմերի համատեղ նախագծերի ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև դրա ղեկավարման գործում Կողմերն ունեն հավասար իրավունքներ:
5.2. Առանձին գործողությունների համար պատասխանատու է Կողմ հանդիսացող կազմակերպությունը:
5.3. Կողմերը կոնկրետ ծրագրեր իրականացնելիս՝ առանձին պայմանագրում նախատեսում են նաև Կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Այն բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են բխել սույն Հուշագրի կամ կապված լինել դրա հետ, կորոշվեն Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն հուշագիրը միջոցների հատկացման պարտավորագիր չէ: Այն ցանկացած Կողմի համար օրենքով պարտադրվող պարտավորություն չի համարվում, կամ իրավունքներ չի տրամադրում որևէ այլ Կողմի համար:
7.2. Սույն Հուշագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կատարվում են գրավոր:
7.3. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:
7.4. Սույն Հուշագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8.1 ԵՊՀ ԻՄ՝

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՄԱԿԱՐՅԱՆ
«Երևանի պետական համալսարան հիմնադրամի» Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար

ք. Իջևան, Տավուշի մարզ, ՀՀ
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Իջևանի մասնաճյուղ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247610017094

.....

8.2 «ԴԻՋԻԹԱԼ ՎԵՅՎ» ՍՊԸ՝

ԱՐՏԱՇԵՍ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՍՊԸ-ի տնօրեն

Անկախության փ., տ"33, Իջևան, 4001
Իջևան Տավուշ ՀայաստանՀ/Հ
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2050922176241001 ՀՀ դրամ
ՀՎՀՀ 07623192

.....